ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ [illegible]

[illegible]

ՀԱՍՑԵ [illegible] 6/7

ՀԵՌ. 094476044

26 0626
8817

## ԴԻՄՈՒՄ

[illegible] 6/7 [illegible]

26 [illegible] 2025 թ.
Օր ամիս տարի

Դիմող [signature]
(ստորագրություն) (անուն, ազգանուն) [illegible]

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Շիրակի մարզ Գյումրի համայնք Գյումրի քաղաք

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Շիրակի մարզ Գյումրի համայնք

Պատվիրատու՝ «ՄԱՄԱՆԵ» արտադրական կոոպերատիվ

Անուն, ազգանուն, հայրանուն




| | |
|---|---|
| Մակերես հա | 0.84738 հա |
| Ծածկագիր | 08-001-1223-0023 |
| Նպատակային նշանակություն | բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | հասարակական կառուցապատում |

*Լրացուցիչ նշումներ.*

Կադաստրային հատակագծում արտահայտված թիվ 4 շինությունը քանդվել է

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Կարեն Տոնոյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0417 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | Ա/Ձ Կարեն Ադամյան |
| ՀՎՀՀ | | 43210729 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 01.12.2023 |
| | հատակագծի կազմման | 13.09.2024 |

Կ.Տ.

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Եզրագծային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 8403215.3447 | 4519490.4677 | 24.79 |
| 2 | 8403218.1245 | 4519515.1056 | 0.21 |
| 3 | 8403218.1475 | 4519515.3104 | 13.80 |
| 4 | 8403208.9864 | 4519525.6369 | 11.73 |
| 5 | 8403210.4376 | 4519537.2734 | 15.01 |
| 6 | 8403211.9466 | 4519552.2074 | 14.31 |
| 7 | 8403213.4925 | 4519566.4367 | 3.69 |
| 8 | 8403213.8910 | 4519570.1050 | 11.21 |
| 9 | 8403225.0016 | 4519568.6414 | 1.35 |
| 10 | 8403226.3443 | 4519568.5192 | 0.19 |
| 11 | 8403226.5330 | 4519568.5021 | 17.06 |
| 12 | 8403243.5132 | 4519566.8486 | 1.26 |
| 13 | 8403244.7353 | 4519566.5608 | 51.56 |
| 14 | 8403295.5157 | 4519557.6221 | 48.07 |
| 15 | 8403342.9501 | 4519549.8147 | 12.74 |
| 16 | 8403355.6509 | 4519548.7810 | 4.02 |
| 17 | 8403355.2637 | 4519544.7794 | 21.01 |
| 18 | 8403353.2464 | 4519523.8661 | 30.75 |
| 19 | 8403322.6286 | 4519526.6820 | 8.01 |
| 20 | 8403321.8831 | 4519518.7021 | 17.50 |
| 21 | 8403304.4932 | 4519520.6641 | 15.21 |
| 22 | 8403302.7884 | 4519505.5536 | 24.79 |
| 23 | 8403300.0087 | 4519480.9157 | 85.20 |
| 1 | 8403215.3447 | 4519490.4677 | |

| 1. սպասարկման օբյեկտ | | | |
|---|---|---|---|
| Եզրագծային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 8403215.3447 | 4519490.4677 | 24.79 |
| 2 | 8403218.1245 | 4519515.1056 | 85.14 |
| 3 | 8403302.7287 | 4519505.5603 | 24.79 |
| 4 | 8403300.0087 | 4519480.9157 | 85.20 |
| 1 | 8403215.3448 | 4519490.4677 | |

| 2.սպասարկման օբյեկտ | | | |
|---|---|---|---|
| Եզրագծային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 8403210.4376 | 4519537.2734 | 15.01 |
| 2 | 8403211.9466 | 4519552.2074 | 9.97 |
| 3 | 8403221.8661 | 4519551.2051 | 15.01 |
| 4 | 8403220.3571 | 4519536.2712 | 9.97 |
| 1 | 8403210.4376 | 4519537.2734 | |

| 3.սպասարկման օբյեկտ | | | |
|---|---|---|---|
| Եզրագծային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 8403224.9488 | 4519554.1882 | 14.40 |
| 2 | 8403226.3443 | 4519568.5192 | 0.19 |
| 3 | 8403226.5330 | 4519568.5021 | 17.06 |
| 4 | 8403243.5132 | 4519566.8486 | 14.40 |
| 5 | 8403242.1176 | 4519552.5164 | 17.25 |
| 1 | 8403224.9488 | 4519554.1882 | |

| 4.պարիսպ | | |
|---|---|---|
| Եզրագծային (բեկման) կետեր | Կոորդինատներ | Գծային չափերը (մ) |
| L=126.18, d=0.2, h=2.4 | | |

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Կարեն Տոնոյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0417 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | ԱՁ` Կարեն Ադամյան |
| ՀՎՀՀ | | 43210729 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 01.12.2023 |
| | հատակագծի կազմման | 13.09.2024 |

Կ.Տ.

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Շիրակի մարզ Գյումրի համայնք Գյումրի քաղաք

Մարզ, համայնք, հասցե

| | |
|---|---|
| Սեփականատեր<br>Պատվիրատու | Շիրակի մարզ Գյումրի համայնք<br>«ՄԱՄԱՆԵ» արտադրական կոոպերատիվ |




1.սպասարկման օբյեկտ
h=5,60
H=5,80
d=0.20
D=0.55

1.սպասարկման օբյեկտ
h=13,0
H=13,0
D=0.30

Լրացուցիչ նշումներ.

| Մասշտաբ 1:500 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Կարեն Տ[illegible]յան |
| Որակավորման վկայականի համարը | | 0417 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | Ա/Ձ Կարեն Ադամյան |
| ՀՎՀՀ | | 43210729 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 01.12.2023 |
| | հատակագծի կազմման | 13.09.2024 |

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Շիրակի մարզ Գյումրի համայնք Գյումրի քաղաք

Մարզ, համայնք, հասցե

| | |
|---|---|
| Սեփականատեր Պատվիրատու | Շիրակի մարզ Գյումրի համայնք «ՄԱՄԱՆԵ» արտադրական կոոպերատիվ |




3.սպասարկման օբյեկտ
h=3,20
H=3,50
d=0.20
D=0.40




2.սպասարկման օբյեկտ
h=4,30
H=4,50
D=0.40

*Լրացուցիչ նշումներ.*

Մասշտաբ 1:200

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Կարեն Տոնոյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0417 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | Ա/Ձ Կարեն Ադամյան |
| ՀՎՀՀ | | 43210729 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 01.12.2023 |
| | հատակագծի կազմման | 13.09.2024 |

Հավելված N 3 (շարունակություն)

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| << | Նպատակային նշանակությունը | Շինությունների գործառնական նշանակությունը | Հարկը | Հարկայնությունը | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութերի տեսակները | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | Թիթեղ | Շիֆեր | Կղմինդր | Այլ նյութ | Անավարտ | Մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | Փայտ | Երկաթբետոն | Սրբատաշ | Երեսապատված | Սվաղած | Ապակեպատ | Առանց արտաքին հարդարման |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | հաս | սպասարկման օբյեկտ | 1 | 1 | 1796,50 | | 13,00 | 23354,50 | 1972 | v | | | | | | | v | տուֆ | մետաղ | | | | | | v |
| 1 | հաս | սպասարկման օբյեկտ | 1 | 1 | 210,31 | | 5,60 | 1177,74 | 1972 | v | | | | | | | v | տուֆ | | v | | | | | v |
| 2 | հաս | սպասարկման օբյեկտ | 1 | 1 | 130,30 | | 4,30 | 560,29 | 1972 | v | | | | | | | v | տուֆ | մետաղ | | | | | | v |
| 3 | հաս | սպասարկման օբյեկտ | 1 | 1 | 209,66 | | 3,20 | 670,91 | 1972 | v | | | | | | | v | տուֆ | v | | | | | | v |
| 4 | հաս | պարիսպ | | | 25,24 | | 2,40 | 60,58 | 1972 | | | | | | | | | տուֆ | | | | | | | v |

| Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
| 27 | 28 | 29 |
| 2372,01 | 2372,01 | 0,00 |

կատարող ____________ Կ.Տոնոյան
(Ստորագրություն) (Անուն, ազգանուն)

13.09.2024 թ
(Ամիս, ամսաթիվ)

մաս. վկայական N 0417 27.05.2021թ.
(Համարը) (տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 80.1233078 ԱՁ՝ Կ.Ադամյան
(պետական գրանցման համարը) (անվանումը)

Կ.Ադամյան
(Ստորագրություն)

«ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ» KAREN ADAMYAN 43210729

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«11» հունիսի 2021 **թվականի** N 559-Ա

ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387- Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով «Մամանե» ԱԿ-ի տնօրեն Եղիշե Գրիգորյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված N4191 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Առուվաճառքի պայմանագրով, «Մամանե» ԱԿ-ին պատկանող, քաղաք Գյումրի Չայկովսկու փողոցի հարևանությամբ գտնվող գլխավոր մասնաշենքին տրամադրել հասցե՝

ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ N6/7 :

Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ ՝ Կ. ԲԱԴԱԼՅԱՆ

2021թ. ք.Գյումրի

# Արձանագրություն

*անշարժ գույքի աճուրդային վաճառքի*

ք. Երևան "27" մարտի 2006թ.

"Իննա-Գրուպ" ՍՊԸ ռիէլտորական կազմակերպության (լիցենզիա՝ ԱԳ-0447, 25.09.2003թ.) կողմից 2005թ. սեպտեմբերի 30-ին ժամը 13-ին Երևանի ապրանքահումքային բորսայի հարթակում՝ հասցե՝ ք.Երևան, Ազաթանգեղոսի փ. 6/1շ., իրականացված հրապարակային աճուրդում *վաճառվել են հետևյալ լոտերը՝*

| | | |
|---|---|---|
| ԻՆՆԱ) | 1.Գլխավոր մասնաշենքից 2016 քմ ( 84մx24մ ), | գինը՝ 4000000 դրամ |
| | 3. Լայն սպառման արտադրամաս (ընդ.մակ.՝ 131,1քմ), | գինը՝ 500000 դրամ |
| | 5. Պահեստ N 3 (ընդ. մակ.՝ 207,58 քմ), | գինը՝ 500000 դրամ |
| | 8. Քարե պարիսպից 120 գծմ, | գինը՝ 100000 դրամ |
| | | Ընդամենը՝ 5100000 դրամ |

Վաճառողի տվյալները Գյումրիի "Հղկող հաստոց" ՓԲԸ

Աճուրդի մասնակիցներից վերը նշված համար Գնորդ է *արձանագրվել՝*

1. "ՄԱՄԱՆԵ" արտադրական կոոպերատիվ (ՀՀ, Շիրակի մարզ)

*Լոտերի ընդհանուր մեկնարկային գինը՝* *4340000* դրամ:

*Լոտերի գնման ընդհանուր գինը կազմել է՝* 5100000 դրամ:

Գնման գնի գումարից, որպես *միջնորդավճար, գանձվել է՝* 204000 դրամ:

*Այլ պայմաններ՝*

1. *Վաճառքի ներկայացված ընդհանուր մակերեսներից գնված N1 և N8 լոտերի մասնաբաժինները ընտրվում են Վաճառողի և Գնորդի փոխհամաձայնությամբ:*
2. *Սույն "Արձանագրությունը" հանդիսանում է 30.09.2005թ.-ին կազմված "Արձանագրության" ճշգրտված տարբերակը՝ հաշվի առնելով Վաճառողի կողմից ներկայացված համապատասխան գրությունը:*

"Իննա-Գրուպ" ՍՊԸ
ք. Երևան, Թումանյան փող., 8
ՀՎՀՀ 01815578
Հ/h 1570003451060100 "Հայներարտբանկ" ՓԲԸ

Տնօրեն ____________ Մ. Երոյան
Կ.Տ.

Գնորդ
"ՄԱՄԱՆԵ" արտադրական
կոոպերատիվ
____________
Կ.Տ.

2

N ԻՆՆԱ)

# ԳՈՐԾԱՐՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ
## ( ԳՆՈՐԴԻ ՀԱՄԱՐ )

27 մարտի 2006թ.
փաստաթղթի տրամադրում

Սույնը տրված է "Իննա-Գրուպ" ՍՊԸ-ի կողմից (հետագայում՝ Կատարող), "ՄԱՄԱՆԵ" արտադրական կոոպերատիվ (հետագայում՝ Գնորդ), առ այն, որ նա 30.09.2005թ.-ին կայացած աճուրդում գնել է

| Լոտի N | Գնված գույքի անվանումը | Չափման միավորը | Քանա-կը | Միավորի գինը (դրամ) | Գործարքի գումարը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| ԻՆՆԱ) | 1.Գլխավոր մասնաշենքից 2016 քմ ( 84մx24մ ) | հատ | 1 | 4000000 | 4000000 |
| | 3. Լայն սպառման արտադրամաս (ընդ.մակ.՝ 131.1քմ) | հատ | 1 | 500000 | 500000 |
| | 5. Պահեստ.N 3 (ընդ. մակ.՝ 207.58 քմ) | հատ | 1 | 500000 | 500000 |
| | 8. Քարե պարիսպից 120 գծմ | հատ | 1 | 100000 | 100000 |
| | | | | Ընդամենը՝ | 5100000 |
| | | | | | |

Գնողը / Վաճառողը վճարել է միջնորդավճար՝ 204000 դրամ:
Գնորդը 10 բանկային օրվա ընթացքում պարտավորվում է վճարել գործարքի գումարից Վաճառողին 4896000 դրամ, իսկ Վաճառողը 20 օրվա ընթացքում՝ ձևակերպել պետական նոտարի միջոցով առուվաճառքի գործարք:

Վաճառողի տվյալները՝ Գյումրիի "Հղկող հաստոց" ՓԲԸ

Այլ պայմաններ՝ 1. Վաճառքի ներկայացված ընդհանուր մակերեսներից գնված N1 և N8 լոտերի մակամասնաբաժինները ընտրվում են Վաճառողի և Գնորդի փոխհամաձայնությամբ: 2. Սույն "ԳՈՐԾԱՐՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ" կազմված է և արտացոլում է 27.03.2006թ.-ի "Արձանագրության" դրույթները:

Կատարողը չի կրում պատասխանատվություն Վաճառողի կամ Գնորդի կողմից չկատարված կամ ոչ լրիվ կատարված պարտավորությունների համար:

Կատարող ________ ստորագրություն   Գանձապահ ________ ստորագրություն   N 30 09 05թ վճարման փաստաթղթի

Ձեւ-1
Դր-1

„Լեռնա Գյուղ" ԱՁԲ
(կազմակերպության անվանումը)

**Դրամարկղային մուտքի օրդերի**

ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 30 09 2005թ.

Ստացված է Ա. Գրիգորյան
(անուն, ազգանունը)

„ՇԻՆԱՐԱՐԿՈՒ" ԱՁԲ -ից:

Ստացման հիմքը եւ նպատակը Գործընկերոջ
Կ (Լեռնա) 30 09 05թ

Գումարը 204000 դրամ:
(թվերով)

Երկու հարյուր չորս
հազար դրամ դրամ:
(տառերով)

Գլխավոր հաշվապահ [signature]
(ստորագրությունը)

Կ.Տ.

Գանձապահ
(ստորագրությունը)

Ձեւ-1
Դր-1

ЕТСБ
(կազմակերպության անվանումը)

Դրամարկղային մուտքի օրդերի

ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 326 30.09 2005թ.

Ստացված է „Мамаке" артдракан
(անուն, ազգանունը)

коор.-ь Григорян Е -ից:

Ստացման հիմքը եւ նպատակը АОЗТ
„Шинф. станок" (поср.сум

Գումարը 16000 դրամ:
(թվերով)

Шестнадцать тысяч
դրամ:
(տառերով)

Գլխավոր հաշվապահ
(ստորագրությունը)

Գանձապահ
(ստորագրությունը)

## 30.09.2005թ. N 374 "ԳՈՐԾԱՐՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ"-ի կից ցուցակ

*Տվյալ ցուցակը հանդիսանում է N 374 "ԳՈՐԾԱՐՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ"-ի անբաժանելի մասը և համարվում է անվավեր առանց "ԳՈՐԾԱՐՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ"-ի*

| Լոտի N | Լոտի անվանումը | Չափ միավ. | Քանա-կը | Միավորի գինը (դրամ) | Գործարքի գումարը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| ՍՊՆ11Ա)3) 12 | Էլ կամրջ. ամբարձիչ ԳՊ-10տ | հատ | 1 | 270000 | 270000 |
| 54 | Օդափոխիչ ՎՑ -4-75 | հատ | 1 | 10 000 | 10000 |
| 87 | Օդափոխիչ սիստեմ | հատ | 2 | 55 000 | 110000 |
| 91 | Օդափոխիչ Ց -4-75-6.3 | հատ | 1 | 10 000 | 10000 |
| | Ընդամենը | | | | 400000 |

Աճուրդի նախագահ — Լ. Ավետիսյան

Գրանցամատյանի վարիչ — Վ. Ղարիբյան

«ԱԴԱՄԱՆԴ» «АДАМАНД» «ADAMAND» 02201301

ԵՐԵՎԱՆԻ «ԱԴԱՄԱՆԴ» ԱՊՐԱՆՔԱ-ՀՈՒՄՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ

ЕРЕВАНСКАЯ ТОВАРНО-СЫРЬЕВАЯ БИРЖА «АДАМАНД»

ՀԱՄԱՐ 374

# ԳՈՐԾԱՐՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ

(ԳՆՈՐԴԻ ՀԱՄԱՐ)

« 30 » 09 2005թ.
գործարքի գրանցում

Սույնը տրված է «[illegible]» [illegible] (հետագայում Գնորդ)

առ այն, որ նա 2005թ. 09 « 30 » -ին բորսայում կայացած աճուրդում գնել է

| Լոտի № | Գնված լոտի անվանումը | Չափի միավ. | Քանակը | Միավորի գինը (դրամ) | Գործարքի գումարը, ներառյալ ԱԱՀ (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| [illegible] 114(3) | [illegible] (4 [illegible]) | | | | 400000 |

Գնորդը/~~Վաճառողը~~ վճարել է բորսային միջնորդավճար 16000 դրամ

Գնորդը 5 բանկային օրվա ընթացքում պարտավորվում է վճարել գործարքի գումարից Վաճառողին 384000 դրամ

իսկ Վաճառողը բաց թողնել վաճառվածը նույն ժամկետում Գնորդին:

Վաճառողի փվյալները «[illegible]» [illegible]

Այլ պայմաններ

Բորսան չի կրում պատասխանատվություն Վաճառողի կամ Գնորդի կողմից չկատարված կամ ոչ լրիվ կատարված պարտավորությունների համար

Աճուրդի նախագահ [signature] ստորագրություն

Գանձապահ [signature] ստորագրություն

№ 326 վճարման փաստաթղթի

«ԱԴԱՄԱՆԴ» «АДАМАНД» «ADAMAND» 02201301

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վարչական նիստի

«27» 03 2026թ. ք. Գյումրի

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանը՝ մասնակցությամբ Գյումրու համայնքի ղեկավարին փոխարինող՝ Ա. Առաքելյանի, մասնակցությամբ համայնքապետարանի աշխատակազմի

[illegible]

Վարչական ակտի հասցեատեր

[illegible]

(Անուն,հայրանուն,ազգանուն)

Այլ անձինք

(Անուն,հայրանուն,ազգանուն)

Տեղի ունեցավ նիստ,որի ընթացքում քննության առնվեցին.

[illegible]

Կոմիսիան ըստ 6/7, 6/8, 6/9 հատ-
վածքի ընդհանուր կառույցի շինություն-
ների փոխանակումները

Նիստի մասնակիցների և նիստում հանդես եկող այլ անձանց ելույթների համառոտ շարադրանքը.

Արտահայտվեցին Վ. Մեհրաբյանը,
Հ. Զաքարյանը, Ա. Մուրադյանը: Նշեցին
որ շինությունը արտաքինով էլ բավա-
կան լավ տեսքով է, բնակարանները և
օբյեկտը պահպանված վիճակում, և
առանձնացված հարկերը ներքին
պահանջներով կառուցել: Նշեցին, որ օբ-
յեկտի ... կառուցման ...
կան ... չկա:

Ընդունված որոշման եզրափակիչ մասը.

[illegible]
[illegible]
[illegible]
6/7, 6/8, 6/9 [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

Լրացուցիչ տեղեկություններ.

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ.

1. դիմում
2. ձայնագրություն
3. [illegible] [illegible]
4. [illegible] [illegible] փաստաթղթեր
5. [illegible] [illegible] [illegible]
6. լուսանկարներ
7. եզրակացության [illegible]
8. [illegible] [illegible], [illegible], [illegible]

Նախագահող՝ Ա. Առաքելյան

Մասնակից /ներ/՝ Կ. Մխիթարյան

(Անուն,հայրանուն,ազգանուն)

Ի. Չապարյան

Մ. Եսայան

Ա. Մուրադյան

Մանվել Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2022-05-13

## «ՄԱՄԱՆԵ»

## Արտադրական կոոպերատիվ (Ա/Կ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | 46.080.00034 |
| Հիմնադրման տարի | 1997 |
| Գրանցման ամսաթիվ | 1997-04-10 |
| Գործունեության ժամկետ | Անժամկետ |
| Կարգավիճակ | Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ զրառված չեն: |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) | 37334948 |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | 05803336 |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | 27080034 |
| Էլ. փոստ | - |
| Կայք | - |

### Գտնվելու վայրը

| | |
|---|---|
| Հասցե | Ն.ՇՆՈՐՀԱԼԻ Փ. / Շ / 12 ԳՅՈՒՄՐԻ 3101 ԳՅՈՒՄՐԻ ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ |
| Հեռախոս | 031232769 |

### Գործադիր մարմնի ղեկավար

| | |
|---|---|
| Պաշտոն | Նախագահ |
| Անուն Ազգանուն | ՄԱՄԻԿՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՂԻՇԵՅԻ |
| Անձնագրային տվյալներ | AN0222038 2012-08-01 016 |
| Հասցե | ՊԱՐՈՆՅԱՆ Փ. / Տ / 6 ԳՅՈՒՄՐԻ 3115 ԳՅՈՒՄՐԻ ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ |

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2022-05-11
«ՄԱՄԱՆԵ»
Արտադրական կոոպերատիվ (Ա/Կ)

## Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրանցված չեն**

## Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **50,000**

## Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ |
| --- | --- |
| 1998-07-06 | Մասնակիցների փոփոխություն<br>Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն) |
| 1998-09-17 | Գործունեության փոփոխություն |
| 2001-02-16 | Անվանման փոփոխություն<br>Կանոնադրական կապիտալի փոփոխություն<br>Հիմնադիր փաստաթղթերի համապատասխանեցում ՔՕ դրույթներին |
| 2002-07-18 | Իրավաբանական հասցեի փոփոխություն<br>Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն) |
| 2009-12-28 | Մասնակիցների փոփոխություն<br>Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)<br>Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն |
| 2012-10-02 | Կանոնադրության թվայնացում |
| 2017-09-14 | Սահմանափակումների գրառում |
| 2019-12-03 | Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն |
| 2022-02-08 | Սահմանափակումների հանում |
| 2022-05-13 | Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)<br>Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն |

Քաղվածքը տրամադրող՝ Հարություն Քիշմիշյան

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 13-05-2022

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ


Խանջյան փողոց
2201
Չայկովսկու փողոց
2202
2204
2205
1223
6/7
85.20
48.9
40.0
35.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Սիրանուշ Հարությունյան

ք. Գյումրի Կ. Դեմիրճյան փ. [illegible] 15ա

ՀԱՍՑԵ

ՀԵՌ. 094 312630

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ Կարեն Դեմիրճյան փ. [illegible] 15ա հասցեի [illegible] [illegible] ինձ։

Մեր ընտանիքում ենք՝ [illegible], [illegible], [illegible] [illegible]։

06. 04 2026 թ.

Օր ամիս

Դիմող՝ [signature]
(ստորագրություն)

Սիրանուշ Հարությունյան
(անուն, ազգանուն)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
[illegible] բաժին
ՄՈՒՏՔ 06.04 2026թ.
[illegible] ԵՆ 4728

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» 01 1999 թ. թիվ 41

## ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն 22 Գերագույն խորհրդի 28. 06. 1993 թ. «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակֆոնդի սեփականաշնորհման մասին» օրենքի և 26.01.99թ. կայացած Քաղաքապետարանի պետական և հանրային բնակֆոնդի սեփականաշնորհման հանձնաժողովի նիստի առաջարկության

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

133. Թույլատրել սեփականաշնորհել Քութաիսյան 15ա տուն, հաշվեկշռով երկու սենյակ, փաստացի՝ երեք սենյականոց, 64,97քմ. ընդհանուր մակերեսով, որից 56,13քմ. բնակելի, 6ղրամ հաշվեկշռային արժեքով, առանձին մեկուսացված բնակարանը, քաղ. Աբրահամ Հմայակի Հարությունյանի անվամբ, որպես ընդհանուր համատեղ սեփականություն ընտանիքի ներքոհիշյալ անդամների հետ՝

1. Հարությունյան Աբրահամ Հմայակի
2. -,,- Պայծառ
3. -,,- Գագիկ Աբրահամի +
4. -,,- Անահիտ Ներսեսի +
5. -,,- Աբրահամ Գագիկի +
6. -,,- Վարդուհի Գագիկի +

4,81քմ. մառանը, 14,82քմ. խոհանոցը, 1,22քմ. զուգարանը, 1,82քմ. միջանցքը, 3,67քմ. բաղնիքը, 4,88քմ. միջանցքը, դիտել որպես ապօրինի:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ 1. Բնակֆոնդատեր կազմակերպություններին՝ սեփականաշնորհված բնակարանը դուրս գրել հաշվեկշռից:
2. Գյումրիի տեխնիկական գույքագրման բյուրոյին՝ կատարել փաստացի գույքագրում և տալ սեփականության վկայագիր:

ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Ճ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ 05511159

Ց000050 16 176
1000 դր

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ

Երկու հազար չորս թվականի
երկուսը դեկտեմբերի
Քաղ Գյումրի, ՀԱՅԱՍՏԱՆ

Ես՝Գյումրի նոտարական տարածքի նոտար ՇՈՒՇԱՆԻԿ ՕՆԻԿԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆՍ Հաստատում եմ որ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1216 հոդվածի քաղ ԱԲՐԱՀԱՄ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ մահից հետո, մահացած 2002 թվականի նոյեմբերի 17 ին գույքի նկատմամբ ժառանգ հանդիսանում
Կինը ՊԱՅԾԱՌ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ
հաշվառված Գյումրի, Քութախիայան փող տուն 15ա
որդին ԳԱԳԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ
հաշվառված միևնույն հասցեում

Ժառանգական գույքը, որի համար տրված է սույն վկայագիրը բաղկացած է Գյումրի քաղաքի, Քութախիայան փող թիվ 15ա բնակելի տան 1/6 մասից որի պատկանելությունը ժառանգատուին հաստատված է համաձայն Գյումրու քաղաքապետի կողմից տրված 27.01. 1999թ թիվ 41 որոշմամբ:

Սույն վկայագիրը գրանցման է ենթակա անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային ստորաբաժանումում:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԹԻՎ 5325
ԳԱՆՁՎԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ –ազատվում է համաձայն ՀՀ տուրքի մասին օրենքի 24 հոդ Գ կետի
ժառանգական գործ- թիվ –482
ԳՅՈՒՄՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
Ն Ո Տ Ա Ր Շ Օ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

339124
ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
НОТАРИАЛЬНЫЙ ДОКУМЕНТ
NOTARIAL DOCUMENT

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2026 թվականի № 779 Ա

**ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, Կ.ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 7 ՆՐԲԱՆՑՔ 15Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 87.14 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ 65.34 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/388-2026 թվագրմամբ), շինությունների հատակագիծը ու բնութագիրը, Հայաստանի Հանրապետության Գյումրիի քաղաքապետի 1999 թվականի հունվարի 27-ի №41–Ա որոշումը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Կ.Դեմիրճյան փողոց 7 նրբանցք 15ա բնակելի տուն հասցեագրությամբ 87.14 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա կառուցված 65.34 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ռուբինյանց փողոց, 12/1 բնակելի տուն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ — Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ — Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Սեփականատեր | Հարությունյան Աբրահամ |
| Պատվիրատու | |

Մարզ Շիրակ  ք. Գյումրի  Ռուբինյանց փ. 12/1  բնակելի տուն

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը

Ձև 1

Հաստատում եմ ___.___.202 թ.

Գյումրի համայնքի ղեկավարի ին փոխարինող  Կ.Տ.

Ա. Առաքելյան

անուն, ազգանուն, հայրանուն




| | |
|---|---|
| Մակերես հա | 0,008714 |
| Ծածկագիր | 08-001-0345-0038 |
| Նպատակային նշանակություն | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակություն | Բնակելի կառուցապատման համար |

*Լրացուցիչ նշումներ.*

| Հողամասի | | | |
|---|---|---|---|
| Բեկվածքային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |

Մասշտաբ 1:500

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | ՍԵՎԱՆ [illegible] ԹՈՎՄԱՍՅԱՆ |
| Որակավորման վկայականի համարը | Ս0296 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը/ԱՁ- անվանումը | ԱՁ «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» |
| ՀՎՀՀ | 99 [illegible]1220 |
| Ստորագրություն | 99 783811 |

| | | |
|---|---|---|
| ամիս ամսաթիվ | Հանութագրման | 09.03.2026 |
| | հատակագծի կազմման | 18.03.2026 |

Կ.Տ.

| Յողամասի | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4519961.54 | 8401851.18 | 11.86 |
| 2 | 4519971.31 | 8401844.46 | 8.64 |
| 3 | 4519976.21 | 8401851.58 | 7.41 |
| 4 | 4519970.11 | 8401855.80 | 0.28 |
| 5 | 4519969.96 | 8401855.57 | 0.48 |
| 6 | 4519969.57 | 8401855.84 | 3.59 |
| 7 | 4519967.53 | 8401852.88 | 3.97 |
| 8 | 4519964.26 | 8401855.13 | 4.80 |
| 1 | 4519961.54 | 8401851.18 | |

| 1. Բնակելի տուն | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 1 | 4519961.54 | 8401851.18 | 11.86 |
| 2 | 4519971.31 | 8401844.46 | 8.64 |
| 3 | 4519976.21 | 8401851.58 | 7.41 |
| 4 | 4519970.11 | 8401855.80 | 0.28 |
| 5 | 4519969.96 | 8401855.57 | 0.48 |
| 6 | 4519969.57 | 8401855.84 | 3.59 |
| 7 | 4519967.53 | 8401852.88 | 3.97 |
| 8 | 4519964.26 | 8401855.13 | 4.80 |
| 1 | 4519961.54 | 8401851.18 | |

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | ՍԵՎԱՆ ՄԱՆՎԵԼԻ ՅՈՎՄԱՍՅԱՆ |
| Որակավորման վկայականի համարը | 0296 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը/ԱՁ- անվանումը | ԱՁ «ՍԵՎԱՆ ՅՈՎՄԱՍՅԱՆ» |
| ՀՎՀՀ | 99.783811 |
| Ստորագրություն | |

| | | |
|---|---|---|
| ամիս ամսաթիվ | Հանույթագրման | 09.03.2026 |
| | հատակագծի կազմման | 18.03.2026 |

Կ.Տ.

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՁԵ 3

Մարզ Շիրակ ք. Գյումրի Ռուբինյանց փ. 12/1 բնակելի տուն

Մարզ, համայնք, հասցե

| | |
|---|---|
| Սեփականատեր | Գյումրիի համայնք |
| Պատվիրատու | Հարությունյան Աբրահամ |

1 Բնակելի տուն
1 հարկ
H=2.8
h=2.6
D=0.55;0.32;0.28
d=0.55; 0.25; 0.15




Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

| | |
|---|---|
| Որակավորում ունեցող անձ | ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ |
| Որակավորման վկայականի համարը | 0296 |
| Ստորագրություն | |
| Իրավաբանական անձի անվանումը/ԱՁ- անվանումը | ԱՁ «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» |
| ՀՎՀՀ | 99.783811 |
| Ստորագրություն | |

| | | |
|---|---|---|
| ամիս ամսաթիվ | չափագրության | 09.03.2026 |
| | հատակագծի կազմման | 18.03.2026 |

Կ.Տ.

# Շինությունների բնութագիրը

| | Ըստ հատակագծի նշանակությունը | Փաստացի նշանակությունը | Հարկ | Հարկայնությունը | Մակերեսները (քմ) Օրինական | Ինքնակամ | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը բետոն | շիֆեր | կղմինդր | այլ նյութ | Ավարտվածության աստիճանը ավարտված | մինչև 50% | 50-80% | 80% և ավել | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը փայտ | երկաթբետոն | Արտաքին հարդարումն ըստ կողմերի չհարդարված | երեսպատված | ծեփված | ներկված | կոլորիտային ծեփում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | Բնակելի | Բնակելի տուն | 1 | 1 | 65,34 | | 2,60 | 169,88 | 1963 | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | v | | | | | | v | տուֆ | | v | | 1 | | | 3 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Շինության ընդհանուր մակերեսը | Այդ թվում Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
|---|---|---|
| 27 | 28 | 29 |
| 65,34 | 65,34 | |

Կատարող ______ (ստորագրություն) Սևան Մանվելի Թովմասյան

______ (ամիս, ամսաթիվ) Կ.Տ

Որակավորման վկայական «0296» տրման ամիս, ամսաթիվը «19.09.2013»թ.

Իրավաբանական անձ 99,783811 ԱՁ «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ »

______ (ստորագրություն)

01Ա933811
ՍԵՎԱՆ
ԹՈՎՄԱՍՅԱՆ
SEVAN
TOVMASYAN
52196219


2494
Ն. Դեմիրճյան փողոց 7-րդ նրբ.
Սարյանի փողոց
2429
0345
Ն. Դեմիրճյան փողոց
0350

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ [illegible]

[illegible] AS 0689029 [illegible] 010-ի

ՀԱՍՑԵ ք. [illegible] Զ. Անդրանիկի փող. շենք 75

ՀԵՌ. 098191684

[illegible] 00926Կ326

ԴԻՄՈՒՄ

[illegible] 75 [illegible] 13 [illegible] 2026թ. [illegible] 3:20 [illegible]

05 03 2026 թ.

Օր ամիս

Դիմող՝ [signature] [illegible]

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ»
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
[illegible] 05.03 [illegible] 26 թ.
[illegible] 3077

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 7 հոկտեմբերի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Կ. Դեմիրճյան փողոց 75 բնակելի տուն

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

19.01.2024թ 92-Ա Համայնքի ղեկավարի որոշում, 20.06.2025թ 46-Ա, 16.09.2025թ 108-Ա Համայնքի ավագանու որոշում

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0334-0012
Մակերեսի չափը (հա)՝ 0.00577
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 07102025-08-0020, գաղտնաբառ՝ IVJZHYIUJ9PE**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ բնակելի

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 08-001-0334-0012-001 | Բնակելի տուն | 42.3 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳՈՀԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 07102025-08-0020, գաղտնաբառ՝ IVJZHYIUJ9PE**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» փետրվարի 2026 թվական N 380 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԿԱՐԼԵՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Էմմա Վաղինակի Վարդանյանը (նույնականացման քարտ՝ 009264626, տրված՝ 2017թվականի դեկտեմբերի 27-ին 064-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Ա.Վասիլյան փողոց 15 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Գայանե Կարլենի Հովսեփյանի անունից, 2026 թվականի փետրվարի 4-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ խնդրելով Գյումրի համայնքի Կարեն Դեմիրճյան փողոց 75 բնակելի տունը նվիրատվության եղանակով Գայանե Կարլենի Հովսեփյանի ընտանիքին օտարելու գործընթացը շարունակել:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի դեկտեմբերի 12-ի Շ-3414/445 գրությունը, 2025 թվականի դեկտեմբերի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 250166016433, N 250166016435, N 250166016435 տեղեկանքները, «Գյումրու բնակարանների սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի հունվարի 21-ի տեղեկանքը, Գայանե Կարլենի Հովսեփյանի անձնագրի պատճենը, 2023 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի» ցանցի տեղեկանքը, Ալբերտ Կարլենի Հովսեփյանի, Հայկ Ալբերտի Հովսեփյանի դիմումները Գյումրի համայնքից Կարեն Դեմիրճյան փողոց 75 հասցեի բնակելի տունը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ, 2023 թվականի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության եզրակացությունը, Գայանե Կարլենի Հովսեփյանի լիազորագիրը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդհոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2026 թվականի փետրվարի 4-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2026 թվականի փետրվարի 11-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Գայանե Կարլենի Հովսեփյանի լիազորված անձ Էմմա Վաղինակի Վարդանյան մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա)Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Կ.Դեմիրճյան փողոց 75 հասցեի 42.3 (քառասուներկու ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 07102025-08-0020 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Կ.Դեմիրճյան փողոց 75 ֆոնդի տան հատկացման հիմքերը չեն պահպանվել (հիմք `«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի դեկտեմբերի 12 -ի Շ-3414/445 գրություն):

գ) Շիրակ Գյումրի Կարեն Դեմիրճյան փողոց 75 հասցեում հաշվառված բնակվում է՝ Գայանե Կարլենի Հովսեփյանը 1976 թվականից,հաշվառված են նաև Ալբերտ Կարլենի Հովսեփյանը 2000 թվականից, Հայկ Կարլենի Հովսեփյանը 2003 թվականից (հիմք՝ 2025 թվականի դեկտեմբերի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 250166016433, N 250166016435, N 250166016435 տեղեկանքներ և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԻ-ի 2026 թվականի հունվարի 21-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի՝ Գայանե Կարլենի Հովսեփյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի հունվարի 30-ի N ՍS-30012026-99-0588, տեղեկանք):

ե) Քաղաքացի՝ Գայանե Հովսեփյանը /ք. Գյումրի, Կ.Դեմիրճյան 75 տուն/ Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից մինչև օրս (հիմք՝«ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի դեկտեմբերի 12-ի տեղեկանք):

զ) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան փողոց 75 բնակելի տան փաստացի տեխնիկական վիճակը գնահատվում է 2-րդ աստիճանի (բավարար), (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի եզրակացություն):

է) Քաղաքացի Գայանե Կարլենի Հովսեփյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու հաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել

է իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Քաղաքացիներ՝ Ալբերտ Կարլենի Հովսեփյանը և Հայկ Ալբերտի Հովսեփյանը հանդիսանում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ և հրաժարվել են Գյումրի համայնքից նվեր ընդունել մարզ Շիրակ, համայնք Գյումրի Կարեն Դեմիրճյան փողոց 75 հասցեի բնակելի տունը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության

իրականացման համաչափության սկզբունքներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետը վարչական մարմինը քաղաքացի Գայանե Կարլենի Հովսեփյանի լիազորված անձ՝ Էմմա Վաղինակի Վարդանյանը դիմումը բավարարեց մասամբ:

### 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Կ.Դեմիրճյան փողոց 75 հասցեի 42.3 (քառասուներկու ամբողջ երեք տասնորդական)քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝
   1) Գայանե Կարլենի Հովսեփյանին ծնված 1960 թվականին
   որպես սեփականություն :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Գայանե Կարլենի Հովսեփյանին :
3. Քաղաքացի՝ Գայանե Կարլենի Հովսեփյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Գայանե Կարլենի Հովսեփյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ
2026թվական ք.Գյումրի


2354
2357
0356
2359
0355
0334
2351
0335
Կուզնեցովի փողոց
Վ. Սարգսյան փողոց


Новая карта
Здесь можно добавить описание.
Обозначения
Google Earth
Image © 2026 Airbus
N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Աշխեն Առաքելյանի [illegible] [illegible] [illegible]

ՀԱՍՑԵ [illegible] 41ա 29 բն

ՀԵՌ. 093-00-96-55

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ օժանդակություն ինձ [illegible]

[illegible] [illegible] 2021 [illegible] [illegible] [illegible]

[illegible]

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ» ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Փաստաթղթաշրջանառության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 18.08 2025թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է № 11846

18.08. 2025 թ.

Օր ամիս տարի

Դիմող՝ [signature]
(ստորագրություն)

Աշխեն [illegible]
(անուն, ազգանուն)

Ձև N 1 (էջ 1)

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | |
|---|---|
| Սեփականատեր | Սեյրան Արշալույսի Սուլթանյան |
| Պատվիրատու | Սեյրան Արշալույսի Սուլթանյան |

Շիրակի մարզ ք.Գյումրի Մ. Խորենացու փողոց 1-ին նրբանցք 11/1

մարզ, համայնք, հասցե

հողհատկացման հիմքը

Հաստատում եմ՝ «____»______ 2026 թ.

Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող

Ա.Առաքելյան

անուն ազգանուն



| | |
|---|---|
| Մակերեսը հա | 0.017847 |
| Ծածկագիրը | 08-001-0115-0013 |
| Նպատակային նշանակությունը | Բնակավայրերի |
| Գործառական նշանակությունը | Բնակ.կառ. |
| Լրացուցիչ նշումներ | |

**Հողամասի**

| Շրջադարձային (բեկման) կետեր | կոորդինատներ X | կոորդինատներ Y | Գծային չափեր (Մ) |
|---|---|---|---|
| 1 | 8401344.9586 | 4521312.9971 | 4.50 |
| 2 | 8401345.6230 | 4521317.4568 | 1.12 |
| 3 | 8401344.5152 | 4521317.6219 | 1.61 |
| 4 | 8401344.7525 | 4521319.2152 | 1.12 |
| 5 | 8401345.8603 | 4521319.0501 | 0.41 |
| 6 | 8401345.9209 | 4521319.4569 | 1.30 |
| 7 | 8401344.6348 | 4521319.6526 | 7.53 |
| 8 | 8401345.7438 | 4521327.1043 | 13.40 |
| 9 | 8401359.0063 | 4521325.2175 | 13.73 |
| 10 | 8401356.9944 | 4521311.6300 | 11.71 |
| 11 | 8401345.3858 | 4521313.1912 | 0.25 |
| 12 | 8401345.3520 | 4521312.9435 | 0.40 |
| 1 | 8401344.9586 | 4521312.9971 | |

Մասշտաբ 1 : 500

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Սոս Մինասյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0380 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «Մինասյան Մարինե Լուկաշևնի» ԱՁ |
| ՀՎՀՀ | | 57454539 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | հանութագրման | 16.03.2026թ. |
| ամիս ամսաթիվ | հատակագծի կազմում | 14.04.2026թ. |

Ձև N 3

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Շիրակի մարզ ք.Գյումրի Մ. Խորենացու փողոց 1-ին նրբանցք 11/1

մարզ, համայնք, հասցե

| | |
|---|---|
| Սեփականատեր | Սեյրան Արշալույսի Սուլթանյան |
| Պատվիրատու | Սեյրան Արշալույսի Սուլթանյան |







| Լրացուցիչ նշումներ | Մասշտաբ 1 : 200 | | |
|---|---|---|---|
| | Որակավորում ունեցող անձ | | Սոս Մինասյան |
| | Որակավորման վկայականի համարը | | 0380 |
| | Ստորագրություն | | |
| | Իրավաբանական անձի անվանումը | | «Մինասյան Մարինե Լուկաշենի» ԱՁ |
| | ՀՎՀՀ | | 57454539 |
| | Ստորագրություն | | |
| | ամիս ամսաթիվ | չափագրության | 16.03.2026թ. |
| | | հատակագծի կազմում | 14.04.2026թ. |

# Շինությունների բնութագիր

| ՀՀ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Հարկ | Հարկայնություն | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | այլ նյութ | անավարտ | մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | փայտ | երկաթբետոն | սրբատաշ | երեսպատված | սվաղած | ապակեպատ | առանց արտաքին հարդարման |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | բնակ. | բն. տուն | 1 | 2 | 100,96 | | 2,60 | 262,50 | 1990 | | | | | | | | v | բլոկ | v | | | | | | 4 |
| 1 | բնակ. | ավտոտնակ | 1 | 2 | 48,60 | | 2,60 | 126,36 | 1990 | | | | | | | | v | բլոկ | v | | | | | | 4 |
| 1 | բնակ. | բն. տուն | նկ. | 2 | 13,97 | | 2,00 | 27,94 | 1990 | | | | | | | | v | ե/բ | v | | | | | | 4 |
| 1 | բնակ. | շվաքարան | | | 1,80 | | | | 1990 | | | | | | | | v | | | | | | | | |
| 1 | բնակ. | բն. տուն | 2 | 2 | 91,00 | | 2,84 | 258,44 | 1990 | | v | | | | | | v | բլոկ | v | | | | | | 4 |
| 1 | բնակ. | պատշգամբ | | | 73,80 | | | | 1990 | | | | | | | | v | | | | | | | | |
| 1 | բնակ. | շվաքարան | | | 67,98 | | | | 1990 | | | | v | | | | v | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
| 27 | 28 | 29 |
| 398,11 | 398,11 | |

կատարող ______________ (ստորագրություն) ______________ (անուն, ազգանուն) 16,03,2026թ (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայականի ______________ (Համարը) ______________ (տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի ______________ (պետական գրանցման համարը) ______________ (անվանումը) ______________ (ստորագրություն)


0013
0014
0093
0021
0016
0048
0017
0005
0015
0033
0014
0012
0044
0013
0011
0046
0010
0045
2832
0019
0027
0009
0115
0003
0042
0029
0004
0028
0049
0041
0027
0030
0005
0018
0043
0006
0007
0002
0019
0024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«08» ապրիլի 2026 **թվականի №** 1116 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՅՐԱՆ ՍՈՒԼԹԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենք 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետու Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387- որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելո քաղաքացի Սեյրան Սուլթանյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանի դիմումը (Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №4388-202 թվագրմամբ), չափագրման արտոնագիր ունեցող «Սոս Մինասյան Մամիկոնի» ԱՁ-ի կողմի տրամադրված հողամասի, շինությունների հատակագծերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռո (քաղաքացիական գործ թիվ ՇԴ/2517/02/14) քաղաքացի Սեյրան Սուլթանյանի սեփականությա իրավունքը ճանաչված անշարժ գույքին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Խորենացու փողոց, 1-ին նրբանցք, 11/1 բնակելի տուն**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արտյոմ Բարսեղյանին պատշաճ կարգո իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ — Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ — Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

Քաղ. գործ թիվ ՇԴ/2517/02/14

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

<<25>> դեկտեմբերի 2014թ. ք.Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ
նախագահությամբ՝ դատավոր Լիլիթ Խաչատրյանի
քարտուղարությամբ՝ Գ. Հարությունյանի
մասնակցությամբ՝
հայցվորի ներկ.՝ Ս.Մխիթարանի
պատասխանողի ներկ.՝ Ա.Վարոսյանի

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Սեյրան Արշալույսի Սուլթանյանի (ծնված՝ 08.09.1951թ., անձնագիր՝ AG 0621365, տրված՝ 14.12.2005թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Նիզամի փող., 54 տուն հասցեում, փաստացի բնակվող՝ ք. Գյումրի Շիրակացի 209/289 քոթեջ հասցեում) ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի (ՀՎՀՀ՝ 05511159, պետական գրանցման վկայական՝ 002079, հասցեն՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1)՝ առուվաճառքի գործարքը վավեր ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին.

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Սեյրան Արշալույսի Սուլթանյանը 2014թ. հոկտեմբերի 16-ին հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի՝ խնդրելով վավեր ճանաչել իր և <<Արմուրպալսիբշին>> նախագծաշինարարական ֆիրմա պետական ձեռնարկության միջև 10.11.1996թ. կնքված թիվ 22 առուվաճառքի պայմանագիրը՝ ճանաչելով իր սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի, Շիրակացի փողոցի 209/289 տնակային հաշվառմամբ քոթեջի նկատմամբ՝ համաձայն կից ներկայցված փաստացի հատակագծի:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 20.10.2014թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Դիմելով դատարան Սեյրան Սուլթանյանը հայտնել է, որ 1990թ.-ից մինչև 2001 թվականը աշխատել է <<Արմուրպալսիբշին>> նախագծաշինարարական ֆիրմա պետական ձեռնարկությունում (որը երկրաշարժի հետևանքները վերացնող շինարարական կազմակերպություն է եղել) ՝ որպես <<Տյումեննստրոյի>> պետ:

Ձեռնարկությունը իր աշխատակիցների համար ունեցել է բնակելի թաղամասեր՝ քաղաքի տարբեր տեղերում, այդ թվում Շիրակացի փողոցին հարող թիվ 209 տարածքում:

Որպես ձեռնարկության աշխատակից, 1991թ. իրեն հատկացվել է Շիրակացի թիվ 209 տարածքի 5 քոթեջը՝ որպես ժամանակավոր կացարան, որտեղ ապրում է իր ընտանիքով առ այսօր: Քոթեջը տարբեր ժամանակներում տարբեր հասցեներով է գրառվել:

1995 թվականից ձեռնարկությունը սկսել է իր աշխատակիցների զբաղեցրած քոթեջները բնակիչներին վաճառելու գործընթաց:

Ինքը, համաձայն 20.05.1996 թվականի պայմանագրի, <<Արմուրալսիբշին>> նախագծաշինարարական ֆիրմա պետական ձեռնարկությունից գնել է իր ընտանիքին հատկացրած և իր ընտանիքի կողմից զբաղեցրած Շիրակացի 209 տարածքում առկա քոթեջը՝ 150.000 ՀՀ դրամով: Այն ունեցել է տարբեր հասցեներ՝ հասցեավորվել է մեկ՝ 238/016 տնակային ավան, մեկ՝ 209/ 286, մեկ՝ 209/289 քոթեջ հասցեներով:

Կողմերի միջև նշված առուվաճառքի պայմանագրի հիման վրա, 21.05.1996թ. վճարել է իր կողմից գնած քոթեջի գումարը՝ 150.000 դրամի չափով:

Դրանից հետո, արդեն 24 տարի, շարունակում է օգտագործել և տիրապետել քոթեջը՝ փաստացի տիրապետող սեփականատիրոջ զգացողությամբ և բոլոր իրավունքներով: Մշտապես զբաղվել է քոթեջի վերանորոգման և տեխնիկապես պահպանման աշխատանքներով, պահպանել է այն քանդվելուց և երրորդ անձանց ոտնձգություններից, հանդիսանում է էլեկտրաէներգիայի բաժանորդ:

Ներկայումս իր ընտանիքով շարունակում է ապրել քոթեջում, որտեղ հաշվառված են նաև իր ընտանիքի անդամները:

Ցանկանում է տնօրինել իր կողմից գնած քոթեջը, սակայն չի կարողանում, քանի որ սեփականության իրավունքի ճանաչման խնդիր կա՝ վաճառող <<Արմուրալսիբշին>> նախագծաշինարարական ֆիրմա պետական ձեռնարկությունը լուծարված է, իսկ վերջինի հետ առուվաճառքի պայմանագիրը կնքել է 18 տարի առաջ, որը չունի նոտարական վավերացում:

Իր գնած գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու այլ հնարավորություն չունենալով, դիմել է դատական պաշտպանության:

Իր պահանջը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի պահանջներից, որի համաձայն՝ նոտարական ձև չպահպանած կողմերի առուվաճառքի գործարքը ենթակա է վավեր ճանաչվելու դատական կարգով:

Ավելի քան 24 տարի քոթեջը տիրապետում է փաստացի տիրապետող սեփականատիրոջ իրավունքներով, սակայն չի կարող լիարժեք օգտվել սեփականատիրոջը տրված իրավունքներից, իր իրավունքը հաստատված չլինելու պատճառով: Իր իրավունքները գնած գույքի նկատմամբ հաստատվում է հետևյալ ապացույցներով՝

10.11.1996թ. թիվ 22 առուվաճառքի պայմանագրով, ըստ որի՝ սեփական հաշվեկշռային գույքը <<Արմուրալսիբշին>> ձեռնարկությունը վաճառել է իրեն;

24 տարի փաստացի տիրապետող սեփականատիրոջ իրավունքով տիրապետում և օգտագործում է քոթեջը;

21.05.1996թ. թիվ 36 վճարման անդորրագրով, որով հաստատվում է, որ քոթեջը գնել է, դրա համար վճարել է վաճառողի կողմից սահմանված գումարը;

պետռեգիստրի գործակալության Գյումրու տարածքային բաժնի կողմից 11.09.2014թ. տրված թիվ 0-4228 տեղեկանքով, որի համաձայն՝ վաճառող ձեռնարկությունը լուծարվել է;

12.07.2004թ.-ից այլ եղանակով հնարավոր չէ օրինականացնել գործարքը;

քոթեջը իր ընտանիքի կողմից /աղջկա/ տիրապետելու փաստի վերաբերյալ տեղեկանքով;

կոմունալ վճարման անդորրագրերով;

անձնագրային բաժնից տեղեկանքով:

Հայցվորը հայտնել է, որ Գյումրի համայնքին ներառել է որպես պատասխանող այն պատճառով, որ իր քոթեջը գտնվում է համայնքապատկան հողի վրա, որը տնօրինելու իրավունք ունի միայն Գյումրու համայնքը և վճռի առկայության պայմաններում իրավասու է իրեն օտարել քոթեջով ծանրաբեռնված հողամասը, որը հետագա խնդիր է:

Ելնելով վերոգրյալից, հայցվորը դատարանից խնդրել է հայցային վարույթի կարգով քննության առնել իր հայցադիմումը և վավեր ճանաչել իր և <<Արմուրպալիբշին>> նախագծաշինարարական ֆիրմա պետական ձեռնարկության միջև 10.11.1996թ. կնքված թիվ 22 առուվաճառքի պայմանագիրը՝ ճանաչելով իր սեփականության իրավունքը 12.07.2004 թվականից լուծարված <<Արմուրպալիբշին>> նախագծաշինարարական ֆիրմա պետական ձեռնարկության կողմից իրեն վաճառած Գյումրի քաղաքի, Շիրակացի փողոցի 209/289 տնակային հաշվառմամբ քոթեջի նկատմամբ՝ համաձայն կից ներկայացված փաստացի հատակագծի:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը նույնաբովանդակ ցուցմունք է տվել և պնդել է ներկայացրած պահանջը: Ավելացրել է, որ հայցվորը գործարքը նոտարական կարգով չի վավերացրել, քանի որ մինչև 1999թ.-ը գույք ձեռք բերելու համար առուվաճառքի գործարքի նոտարական վավերացումը պարտադիր չի եղել: Դրանից հետո է նման գործարքների նոտարական վավերացումը պարտադիր դարձել: Դրանից հետո հայցվորը դիմել է <<Արմուրպալիբշին>> նախագծաշինարարական ֆիրմա պետական ձեռնարկությանը՝ գործարքը նոտարական կարգով վավերացնելու խնդրանքով, սակայն ձեռնարկությունը խուսափել է գործարքին նոտարական վավերացում տալ, քանի որ ունեցել է մեծ խնդիրներ և հայցվորի խնդրին ուշադրություն չի դարձրել:

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Պատասխանող Գյումրու քաղաքապետարանի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում հայտնել է, որ հայցվորի հայցը հիմնավոր է և Գյումրու քաղաքապետարանը հայցի դեմ որևէ առարկություն չունի:

4. Վկաների ցուցմունքները.

Վկա Գագիկ Մելքոնյանը ցուցմունք է տվել դատարանին և հայտնել է, որ Սեյրան Սուլթանյանի հետ հանդիսանում են խնամիներ: Տեղյակ է, որ Սեյրանը 1990-ական թվականներից ապրում է Շիրակացի փողոցում: Սեյրանը աշխատել է շինարարական կազմակերպությունում, նշված կազմակերպությունը պատկանել է ռուսներին: Սեյրանին տունը հատկացվել է, նա էլ սեփականաշնորհել է: Տունը հանդիսանում է քոթեջ, բաղկացած է երկու հարկից: Չի լսել կամ իմացել, որ

Սեյրանի տունը պատկանում է ուրիշին և նա այն պետք է ազատի: Գիտի, որ նշված տունը պատկանում է Սեյրան Սուլթանյանին:

Վկա Արարատ Նիկողոսյանը ցուցմունք է տվել դատարանին և հայտնել է, որ Սեյրան Սուլթանյանին ճանաչում է որպես հարևան: Ինքը 20 տարուց ավել բնակվել է Սեյրան Սուլթանյանի հարևանությամբ: Բնակվում են Շիրակացի փողոցի 209 տարածքում: Սեյրանի տունը քոթեջ է, որը բաղկացած է 2 հարկից: Նշված տանը Սեյրանը բնակվում է ընտանիքի հետ միասին: Իմացել է, որ տունը զնել է: Չի տեսել կամ իմացել, որ որևէ մեկը գա և Սեյրանից պահանջի տունը ազատել, քանի որ տունը պատկանում է Սեյրանին:

5.Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստաթղթերն են.

1. Հայցվոր Սեյրան Արշալույսի Սուլթանյանի անձնագրի պատճենը (ծնված՝ 08.09.1951թ., անձնագիր՝ AG 0621365, տրված՝ 14.12.2005թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Նիզամի փող., 54 տուն հասցեում):

2. 20.05.1996թ. <<Արմուրալսիբշին>> նախագծային-շինարարական ֆիրմա պետական ձեռնարկության և Սեյրան Արշալույսի Սուլթանյանի միջև կնքված թիվ 17 պայմանագիրը, որ համաձայն՝ <<Արմուրալսիբշին>> ՆՇՖ ՊՁ տրամադրում է, իսկ քաղաքացի Սեյրան Սուլթանյանը ձեռք է բերում քոթեջ՝ կանխիկ գումարով, որը հաստատված է որպես ֆիրմայի մշտապես գործող կոմիսիա՝ 150.000 ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ: Քոթեջը գտնվում է <<ԱՌԻՄՇ>> ՆՇՖ ՊՁ բալանսին և այնտեղ նա բնակվում է: Քաղաքացի Սեյրան Սուլթանյանը պարտավորվում է կատարել կանխիկ վճարում 150.000 դրամի չափով <<Արմուրալսիբշին>> ՆՇՖ ՊՁ դրամարկղ լրիվ կամ մասնակի մինչև 1 սեպտեմբերի 1995թ.-ը: Դրամարկղի կատարած ամբողջական մուծումից հետո նրան կտրամադրվի քոթեջի ձեռքբերման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

3. 21.05.1996թ. թիվ 36 անդորրագրի համաձայն՝ Սեյրան Սուլթանյանից <<ԱՌԻՄՇ>> ՊՁ ստացել է 150.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ 5 քոթեջի գնման գումարի:

4. Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի թիվ 209/289 քոթեջի փաստացի հատակագիծը:

5. 09.09.2014թ. Գյումրու քաղաքապետարանի <<Գյումրու բնակարանների սպասարկում>> ՓԲ ընկերության կողմից տրված տեղեկանքը, որի համաձայն՝ Սեյրան Սուլթանյանը բնակվում է 209/289 ժամանակավոր կացարանում:

6. <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության <<Ղարս>> մասնաճյուղի կողմից տրված բաժանորդի էպիկրիզը, որի համաձայն՝ Սեյրան Սուլթանյանը Գյումրի քաղաքի տնակային ավան 238/016 հասցեում 1998թ.-ից օգտագործել է էլեկտրաէներգիա, որի համար կատարել է համապատասխան վճարումներ:

7. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Գյումրու տարածքային բաժնի կողմից 11.09.2014թ. տրված թիվ 0-4228 տեղեկանքը, որի համաձայն՝ <<Արմուրալսիբստրոյ նախագծա-շինարարական ֆիրմա>> պետական ձեռնարկությունը պետական ռեգիստրում գրանցվել է 29.05.1995թ.-ին, իսկ 12.07.2004թ. լուծարվել է:

8. Վկաներ Գագիկ Մելքոնյանի և Արարատ Նիկողոսյանի ցուցմունքները, որով հաստատվում է այն փաստը, որ Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի 209/289

քոթեջը 1999-ական թվականներից փաստացի տիրապետում է Սեյրան Սուլթանյանը՝ որպես սեփականություն:

9. 14.10.2014թ. թիվ 000024 վճարման անդորրագրերի համաձայն՝ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելու համար ՀՀ պետական բյուջե վճարել է 4000 ՀՀ դրամ:

## 6.Դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

Ուսումնասիրելով հայցադիմումը, լսելով հայցվորի ներկայացուցչին, պատասխանողի ներկայացուցչին, վկաներին, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դատարանն ապացուցված է համարում, որ 20.05.1996թ. <<Արմուրալսիբշին>> նախագծային-շինարարական ֆիրմա պետական ձեռնարկության և Սեյրան Արշալույսի Սուլթանյանի միջև կնքվել է թիվ 17 պայմանագիրը, որի համաձայն՝ <<Արմուրալսիբշին>> ՆՇՖ ՊՁ տրամադրել է, իսկ քաղաքացի Սեյրան Սուլթանյանը ձեռք է բերել քոթեջ՝ կանխիկ գումարով, որը հաստատված է որպես ֆիրմայի մշտապես գործող կոմիսիա՝ 150.000 ՀՀ դրամով ներառյալ ԱԱՀ: Քոթեջը գտնվում է <<ԱՌԻՄՇ>> ՆՇՖ ՊՁ բալանսին և Սեյրան Սուլթանյանը բնակվել է քոթեջում: Քաղաքացի Սեյրան Սուլթանյանը պարտավորվել է կատարել կանխիկ վճարում 150.000 դրամի չափով <<Արմուրալսիբշին>> ՆՇՖ ՊՁ դրամարկղ լրիվ կամ մասնակի՝ մինչև 1 սեպտեմբերի 1995թ.-ը: Դրամարկղի կատարած ամբողջական մուծումից հետո նրան կտրամադրվի քոթեջի ձեռքբերման բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Պայմանագրով սահմանված կարգով Սեյրան Սուլթանյանը <<Արմուրալսիբշին>> ՆՇՖ ՊՁ վճարել է 150.000 ՀՀ դրամ՝ որպես թիվ 5 քոթեջի գնման գումար /հիմք՝ 21.05.1996թ. թիվ 36 անդորրագիրը/:

09.09.2014թ. Գյումրու քաղաքապետարանի <<Գյումրու բնակարանների սպասարկում>> ՓԲ ընկերության կողմից տրված տեղեկանքով հաստատվում է այն հանգամանքը, որ Սեյրան Սուլթանյանը բնակվում է 209/289 ժամանակավոր կացարանում: <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության <<Լարս>> մասնաճյուղի կողմից տրված բաժանորդի էպիկրիզով հաստատվում է, որ Սեյրան Սուլթանյանը Գյումրի քաղաքի տնակային ավան 238/016 հասցեում 1998թ.-ից օգտագործել է էլեկտրաէներգիա, որի համար կատարել է համապատասխան վճարումներ:

<<Արմուրալսիբշին>> ՆՇՖ ՊՁ սահմանված կարգով պատշաճ չի կատարել իր պարտավորությունը, խուսափել է գործարքին նոտարական վավերացում տալուց, չի ներկայացել նոտարական գրասենյակ՝ առուվաճառքի գործարքը նոտարական կարգով վավերացնելու համար, որի պատճառով հայցվորը դիմել է դատական պաշտպանության:

<<Արմուրալսիբշին նախագծա-շինարարական ֆիրմա>> պետական ձեռնարկությունը պետական ռեգիստրում գրանցվել է 29.05.1995թ.-ին, իսկ 12.07.2004թ. լուծարվել է /հիմք՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Գյումրու տարածքային բաժնի կողմից 11.09.2014թ. տրված թիվ 0-4228 տեղեկանքը/:

Վկաներ Գագիկ Մելքոնյանի և Արարատ Նիկողոսյանի ցուցմունքներով հաստատվում է այն փաստը, որ Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի 209/289 բոքսը 1999-ական թվականներից փաստացի տիրապետում է Մելրան Սուլթանյանը` որպես սեփականություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է սեփականության իրավունքի ձեռք բերման կարգը, մասնավորապես` ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172 հոդվածի 1-ին մասի համաձայն` սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունքը կարող է ձեռք բերել այլ անձ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470 հոդվածի համաձայն` առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը /վաճառողը/ պարտավորվում է մյուս կողմին /գնորդին/ որպես սեփականություն հանձնել /գույք/ ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար /գինը/, իսկ նույն օրենսգրքի 561 հոդվածի համաձայն` վաճառողը, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել հողամաս, շենք, շինություն, բնակարան կամ այլ անշարժ գույք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296 հոդվածի 1-ին կետի համաձայն` գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտվում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարքը կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ-ի հուլիսի 25-ի թիվ 3-417 /ՎԴ/ որոշման համաձայն` գրավոր փաստաթղթի պարտադիր պայմաններն են հանդիսանում գործարքի առարկան, կողմերը, գինը և վճարման կարգը:

Փաստորեն, օրենքով նախատեսված կարգով կողմերի միջև կնքվել է առուվաճառքի գրավոր պայմանագիր, որը չի վավերացվել նոտարական կարգով, սակայն կողմերը պահպանել են ՀՀ վճռաբեկ դատարանի 2008թ-ի հուլիսի 25-ի թիվ 3-417 /ՎԴ/ որոշման սահմանված գործարքի պարտադիր պայմանները, այն է` առկա է գործարքի առարկան /Գյումրի քաղաքի Շիրակացի 209/289 հասցեում գտնվող բոքսը/, կողմերը /գնորդ` Մելրան Սուլթանյան, վաճառող` <<Արմուրալսիբշին>> նախագծա-շինարարական ֆիրմա պետական ձեռնարկություն/, գինը` /150.000 ՀՀ դրամ/: Գնորդը վճարել է գույքի արժեքը, իսկ <<Արմուրալսիբշին>> նախագծա-շինարարական ֆիրմա պետական ձեռնարկությունը հայցվորին է հանձնել գույքը` հանելով իր հաշվեկշռից:

Դատարանը, ելնելով վերոգրյալից հաստատված է համարում այն փաստը, որ <<Արմուրալսիբշին>> նախագծա-շինարարական ֆիրմա պետական ձեռնարկության և Մելրան Սուլթանյանի միջև գործարքի պարտադիր պայմաններով կնքվել է առուվաճառքի պայմանագիր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի համաձայն` եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գործարքը կատարած կողմի պահանջով գործարքը վավեր ճանաչելու համար սահմանել է անհրաժեշտ հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը` կողմերից մեկի

կողմից գործարքի լրիվ կամ մասնակի կատարված լինելը, և մյուս կողմի խուսափելն օրենքով նախատեսված կարգով գործարքի վավերացումից:

Տվյալ դեպքում կողմերի կողմից կատարվել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, այսինքն՝ կողմերի կողմից կատարվել են պայմանագրի էական պայմանները, դրանք են՝ վաճառողի կողմից պայմանագրի առարկա հանդիսացող գույքը սահմանված ժամկետում հանձնվել է հայցվորին՝ գնորդին, իսկ վերջինս էլ վճարել է գույքի ձեռք բերման համար պայմանագրով սահմանված գումարը, մինչդեռ, օրենքի պարտադիր պահանջը, այն է՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը նոտարական վավերացման ենթարկելը, <<Արմուրալսիբշին>> նախագծա-շինարարական ֆիրմա պետական ձեռնարկության կողմից չի կատարվել, այժմ էլ նշված ընկերությունը լուծարված է:

Պատասխանող Գյումրու քաղաքապետարանի ներկայացուցիչը դատաքննության ընթացքում հայտնել է, որ հայցվորի հայցը հիմնավոր է և Գյումրու քաղաքապետարանը հայցի դեմ որևէ առարկություն չունի:

Ելնելով վերոգրյալից, դատարանը գտնում է, որ հայցվոր Սեյրան Արշալույսի Սուլթանյանի պահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ դատարանը գտնում է, որ այդ հարցը անհրաժեշտ է համարել լուծված, քանի որ օրենքով սահմանված չափով պետական տուրքը հայցվորի կողմից վճարվել է և այդ կապակցությամբ որևէ պահանջ ներկայացված չէ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 140 հոդվածներով՝ դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հայցը բավարարել՝ վավեր ճանաչել հայցվոր Սեյրան Արշալույսի Սուլթանյանի և <<Արմուրալսիբշին>> նախագծա-շինարարական ֆիրմա պետական ձեռնարկության միջև կնքված Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի 209/289 հասցեում գտնվող քոթեջի առուվաճառքի գործարքը՝ ճանաչելով Սեյրան Արշալույսի Սուլթանյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի 209/289 հասցեում գտնվող քոթեջի նկատմամբ՝ ըստ փաստացի հատակագծի:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կարող է կատարվել ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի միջոցների հաշվին:

4. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից՝ մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ <<.........>> ........... 2015թ.

ԴԱՏԱՎՈՐ՝ Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ